

կը մայ և եթէ անզգոյշ գտնուելով ան-
հեթեթ յոյրախտաւոր պիտի ըլլար, գէր
և ծանրաշունչ պիտի տեսնուէր, անձին
գովելի զգուշութեամբ վայելու և նրբա-
կազմ մալուկ' առողջ, աշխոյժ և արթ-
նամիտ գործունեալթին մը կ'ունենայ:

Այսկայն, ընդհանրապէս, յոյրախտու-
թեան ենթական շատ ուշ կ'անզգազառ-
նայ իւր տիտուր վիճակը. ոչ իւր ախոր-
մակին և ոչ ալ քնասիրութեան յաղթած
կ'ըլլայ. իսկ եթէ երրեմ փորձած է ինց-
գինը սանձել և պատերազմիլ սոնցու-
թեան զէմ, կամ կարճատե և կամ ձա-
խող եղած են իր ճիգերը, և ճարպաւորու-
թիւնը իւր հիւսուածներուն մէջ թափան-
ցած է, պէտք է այդ ճարպը հալեցնել: Զանազան
տեսակ ոճեր նկարազորուած
են՝ որոնք ամէնն ալ զգուարին են. առաջ
արդինց ունեցող ոճերը պէտք է բը-
ժըշկի հսկողութեան տակ ըլլան, վասն զի
սաէզ մագրողականներ, երկարատև մար-
մնական կրթութիւններ, յետին սատիճանի
սննդառութեան քանակը նուազեցնել և
մասնաւոր զեղեր գործածել կը պահանջնեն:
Բայց բոլոր այս կերպով ստացուած նի-
հարութիւնները կարճատե և անցողական
կ'ըլլան, և սակայն երրեմ անհրաժեշտ հարկ
կ'ըլլայ սոյն միջոցներուն ձեռնարկել, յոյ-
րախտաւորի կեանցն ազատելու համար:
Անզամ մը սոյն օրինակ ոճով մէկը
վատուժնայ, եթէ սառուցի կ'ուզէ ա-
ռողջանալ, պէտք է վերոյիշեալ զգուշու-
թիւնները կանոնաւորապէս և յարատեա-
բար գործադրէ և բոլորովին իր ուտե-
լիքներու ցանկէն դուրս հանէ ճարպը,
փեկունները, շաբարը. իրեր ըմպեկիք թե-
թև թէյ և նմանօրինակ տաք խաշոյններ
ըստ կարեւոյն առանց շաբարի. հացը վե-
րածել մի քանի կեղեային պատառի. կե-
րակուրի վերջը՝ խաշած կանաչեղիններ և
եփած պտուղներ ուտելով՝ զեռ չի յագե-
ցած անօթութիւնը խարելու է. սոյն ոճով
չափաւորուած սննդական ճաշացուցակը
պէտք է ամրողջանալ, սաէզ լուծողական-
ներ առնելով. վերնամաշկը զրգութով՝ պաղ
ջուրի լոգանքով, մարմինը մարզելով, պը-

տոյտներով, մարմնակրթանքներով, կէս
օրուան ցունէ հա կենալով:

Յոյրախտի բուժումը տաժանելի է.
սկիզբէն՝ անօթութիւն զգալը գրեթէ յա-
րատու է՝ քանի որ սննդառութիւնը չափա-
ւորելով՝ դներային և ճարպային սպա-
ռումը անօթութեան կը զգուն. և զօրա-
որ տոկունութիւն պէտք է ուտելու և խը-
մելու այդ պահանջները չի կոհացնելու հա-
մար: Եւ սակայն նպատակի գերազանցու-
թիւնը պէտք է բաջալերէ զմարդ յարա-
տելու, նոյն իսկ զանազան տարիներ՝
մինչեւ որ բնութիւնը վարդի սակաւապե-
տութեան, յիշելով իտալական առածը
թէ՝ մարդիկ աւելի որկորով կը մեռնին՝
քան արով: Եւ այս ստոյդ է թէ սակա-
ւապետները աւելի երկարակեաց կ'ըլլան,
քան որկորաժէտները:

Գէշն այս է որ յոյրախտի տեսակ մ'ալ
կայ՝ որ անբուժելի է, և ենթական նոյն
իսկ գրեթէ բան չուտելով հանդերձ կը
պարարտանայ. այս զարտուիլ պարա-
գային անպատճառ թշկի յարատու հրս-
կողութիւնը և ինամբը պէտք չէ զանց
ընել՝ հիւսուդին կեանքը երկարելու հա-
մար:

P. L. Jaqueller

Հ. Ն.

ՄՏԱԿՈՐԱԿԱՆ ՍՆՈՒՆԴԸ

ԵՒ ՁՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճ. Ճ.

Ամէն մարդ զիտէ որ սննդական վատ
իրեղիններ, զէշ կերպով իւրացուած ու-
տեստեղիններ, և յոսի մարսողութիւնները՝
անհատներու ստամորի և աղիցներու
իանգարում և հիւսուդութիւններ կը պատ-
ճառին: Այս բան այնքան յայտնի և քա-
նական է որ եթէ մէկը ուզենայ հակա-
ռակիլ կամ տարակուսիլ, իսկոյն ողջմտու-
թենէ զուրկ պիտի համարուի:

Արդ, եթէ ես ձեզի ըսեմ, ով ընթեր-
ցողներ, որ մտաւորական սեւեղը երբ-

թութեան կամ մարդուս բարոյական խառնութեածին համաձայն չէ, կարող է ջղային խանգարութեան պատճառել, մտային հիւանդութիւններ առաջ բերել ձեր մէջ, վստահ եմ որ շատերնիդ լուրջ մտահոգութեան պիտի մատնեմ: Եւ սակայն եթէ այս իմ կրկին պարբերութիւններս միացընելով՝ վրան խորհրդածէք, վստահ եմ թէ ինձ իրաւունք պիտի տար:

ԺԹ գարուն վերջնը (neurasthé-nie) ջղագարութիւն կոչեցին՝ ջղային խանգարման այն ամրողնութիւնը որ մը-տաւրական գէշ սննդառութենէ մը առաջ կու զայ և կարծեցին թէ նոր տեսակ հիւ-ւանդութիւն մ'էր, վասն զի անուանակո-չութիւնը նոր էր, բայց ախտը հին. մի միայն այս վերջին ժամանակները շատ աւելի ընդհանրացաւ և համաճարակի ձեւ առաւ:

Ասկէ 144 տարի առաջ՝ որ է ըսել
1772ին Թիւսոյ Երևանի քժիշկը կը գրէր.
«Ծղերու Հիւանդութիւնները այժմ շատ
յաճախադէպ են և տեսակ տեսակ, ինչ որ
60 տարի առաջ չէր»: Եւ իրաց վիճա-
կին զվիաւոր պատճառներն ալ զբելով,
կ'ըսէր. «Ուսամունքի սէրը և զրահանու-
թեան մշակոյթի շատ աւելի ծաւալմունքը,
Հեղինակներու բազմանալը՝ որոնք զեր
աւելի բազմաթիւ ընթերցուներ կը ծնու-
ցաննեն, և յարատեն ընթերցումը՝ ջը-
պային ամէն հիւանդութիւններու ծնունդ
կու տայ: Կարելի է որ, կ'աւելցնէ, կի-
ներու առողջութեան վնասուելուն՝ զանա-
զան պատճառներու մէջէն զվիաւոր եղած
է՝ հարիւր տարիէ ի վեր վիպասանու-
թեանց շափազանց բազմապատկուիր:

Վիպասանութեանց յաճախ և շարունակեալ ընթերցումը՝ մեր առողջապահական վիճակը հիմովին կը խանգարէ: Թիսոյ կը շարունակէ: «Կրծկալ ունենալէ մինչև խոր ծերութիւն՝ կանայց այնքան եռանդեամբ վիպասանութիւններ կը կարդան և վախնալով որ չըլլայ թէ մտքերնին ցրուի, տեղիքնէն չեն շարժիր, ատէպ շատ ուշ անկողին կը մտնեն, որպէսզի ժամանակ ունենան իրենց հետաքր-

ერთ ქმან კირებ յაყენს საცხოვოს. ჩემ ირ რა ა-
გარდა აკავებული წერენ აოვი გიორგი მანი კი
ფანაგანს. აოვან ხის სისტემა აუქნ ჰანან გ
მასინ ირ წერენ ას ქაფასა ანი ცხან გ
ცხელენ აკავებული ს ირ ინგ მთელ ირ ეს ირ ირ
კა აუცხავა მთელ ას ხელ კავენ გიორგი მანი მანი
მთელ ხის სისტემა კი ვერ გადას. « გაავ თა-
რებულ აუგის მღებ მღებ, ხელ ფიქან აკ ქაფხ-
ხოვ, კი ჰარგავ, გასან თარებულ კი ჩემ
ხელად ასთ აუგის აუგის ელავ მთელ სისტემა მღებ
ა აუგ წარ ერთ დამაკა მღებ »:

Եթէ Թիմասն դառնար այս աշխարհն՝
անտարակոյս իւր կանխասացութիւնը ըս-
տուգուած պիտի տեսնէք և Պր. Պրիոյի
և Հրիկը կնկան տեղ փոխանակուած» Թա-
տերախաղը պիտի ծափահարէք :

Արդ ուրեմն, պէտք է լաւ զիտնալ որ
եթէ կանայց ընթերցումի ուղեղային ան-
արարողութեան ինքզինքնին կը մատնեն,
սա է պատճառը՝ որ այն ընթերցումները
զգվիչ են և զիրենց կը զրգուն շարու-
ակելու. վասն զի ճիշջ կը նմանին որ-
դրամոլներու որոնց պարագ և արուես-
տակեալ կերպուներով՝ անմարողու-
թեամբ կը տառապին. և ինչպէս եթէ ա-
ռոնց իրենց սեղաններուն վրայ սակաւա-
գէս կերպուներ ունենային՝ առողջու-
թիւննին լաւ պիտի ըլլար, այսպէս ալ
նթերցումով՝ կանայց անխոհեմարար պի-
տի չի յապազէին ննջելու՝ եթէ իրենց
որքերը իմաստութեամբ և լուրջ բարձրու-
թեամբ օժտուած ըլլար:

Հեղինակութիւններ կան որոնք գիտիի
կտ զիմուռ կը զարնեն և որոնց շարու-
ակեալ ընթերցումը բարոյական քայ-
այում կը պատճառեն, ինչպէս ոգելից
մակելիքներու չափազանցութիւնը ջղային
բութեան խանգարում առաջ կը բերէ:

Ընդհակառակն կան ուրիշ հեղինակու-
թիւններ ալ, որոնց կը զովացնեն և կը
աղաքեն մարդուս հոգին, ինչպէս վտակի
ուրիշ մարմններ կը զովացնէ: Այս վեր-
իններուս ընթեցումը գերազանցօրէն
ժամանակ:

Կ'ուզէ՞ր, սիրելի ընթերցողներ, պարզ
զիւրին ընտրութիւն մ'ընել ջղային

դրութիւնը զօրացնող հեղինակութիւնները՝ քայլայողներէն զանազաններու համար: Իրիկունը անկողին մտնելէ վերջ՝ կարգացէք ձեր զիրը: եթէ ընթերցումը ձեզի շահագրգուակն ըլլալով հանդերձ՝ անուշութեամբ Մորփէսը չուշանար ձեր աշքերը փակելու, նշան է թէ ձեր զիրը լաւ տեսակէն է, պահեցէք զայն և կարդացէք: այդ զիրը ձեզի օգտակար է: Եթէ, ընդհակառակն զիրը ընթերցումը ձեր հետ տաքրը բարութիւնը սաստկացնելով՝ ձեր քունը կը փախցնէ, այդ զիրը վնասակարէ, մէկդի նետեցէք զայն, վասն զի ան ձեր մէջը կը սաստկացնէ ընթերցումի այն բուռն կիրը՝ որ կարծես զձեզ կը դիւահարէ՝ այն աստիճանի՝ որ ամէն լուրջ զրադում և պարտականութիւն մէկդի թողուլ կու տայ: Ես կին մը ճանչցայ՝ որ այս տիսուր մոլութեան զոհուելով՝ իւր կեանը վիպասանութիւններ լափելով անցրնելոն պատճառաւ, մէկդի թողած ամէն հոգ և գուրգուրանց կամ կոկիկութիւն, երեսի վրայ ձգած իւր զաւակները, և ինքն ալ ամենակատարեալ անհոգութեան մէջ ապրելով, իւր ներքինը կամ խիդը ոտնակոխ ըրած՝ իւր ընտանեկան յարկը խեղճութեան և կործանման վիճակի մատնած էր:

Ստուգիւ այդ կինը թեթևսոլիկ մ'էր և թիսասյի ըսածին պէս, ոչ բարի ծծմայր մը, ոչ լաւ հարս մը և ոչ ալ ընտիր մայր մ'էր, և մի՛ զարմանաց աւելցնելուս թէ նա, երջանիկ կին մը չէր:

Dr. Gaborian

Հ. Ն.

ՇԱՆ ՄԸ ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ճ. Ճ

Մանօթ է որ ամէն զօրաբանակներու մէջ՝ մարդուս բարեկամ շունք՝ ոչ միայն զինուորներու զուարճութիւն, այլ նաև մեծ ծառայութիւն կը մատուցան՝ թշնամիին դէմ զիշերային պահանորդ կանգնելու, վիրաւորեալները որոնելու, անոնց

կազդուրիչ զարմաններ տանելու և նոյն իսկ թղթատարի պաշտօն կատարելու մէջ. վերջապէս արագահաս պաշտօնեայի դերեր կը կատարէ:

Յիրաւի կ'արժէ արձանագրել, նախունինական պատերազմներու ատեն, թարիզու զօրաբանակին մէջ ծառայող՝ Տակոսկւ անուն շան մը եսասիրութեան՝ սամիջադէպը:

Տակօ վես երևելի զարձած էր հեռաւոր ջոկաններու համար սահմանուած դրամները՝ բասկներով տանելու, պատկանեալ տեղերը յանձնելու և անդորրագրեր առնելով բերելու՝ արկդակալին յանձնելու:

Խեղճ կենդանին անզամ մը շտապաւ իւր պաշտօնը կատարելու ատեն, կը տեսնէ որ ցեղակիցներէն զանազան անհատներ կոռուփ բռնուած էին. չի կրնալով իւր բնազդական փորձութեան զիմազդել՝ ուղացեց ինքն ալ բաջութիւն ցուցընել. բերնին բասկը հողի տակ ծածկելէ վերջը, նիստուեցաւ պայցարին մէջ և երե մարտը վերջացաւ ու միտքը եկաւ բասկը, չի յիշեց ուր պահած ըլլալը, փնտոեց, շատ փնտոեց և յուսախար ու սրտաբեկ՝ ուշ ատեն, անօթի ծարաւ ստիպուեցաւ զօրաբանակը գառնալ: Զօրականները հասկցան զիմուն եկածը, սկսան Տակոսկւ ծաղրածել և վինըը կոչել... զոդ, աւազակ:

Այս վերջին ամրաստանութիւնը շատ գպաւ շան եսասիրութեան, պատաւ մը բան ուուելէ վերջը՝ զարձաւ բասկը պահած վայրը. երեց օր երեց զիշեր ամէն կողմ հոտուըտալով՝ լաւ մը խուզարկեց և վերջապէս թանկարժէք բասկը հողի տակէն դուրս հանելով, անմիջապէս խրոխտ և յաղթական շարժուձեռվ մը վազեց բանակ. զինըը ծաղրողներուն առջեւ բասկը ճօճացնելով՝ տարաւ, յանձնեց իր տիրո՞շ՝ արկդակալին:

Հ. ՆերՍէՍ Մ.